Սանտ Էլենայի մօտից ձկնորսական առագաստանաւեր են անցնում։ Բայց դեղին եւ կըրմինդրագոյն առագաստները՝ քիչ քամիի պատճառով՝ ծփում են, ոլոր դալիս եւ կամաց շարժւում։

Ծառերի միջից երեւացող այդ տեսարանը այնպիսի մի տպաւորութիւն է թողնում, որ կարծես ամբողջ պարտէզը շարժւում է, որ կղզին լողում է դէպի անյայտը, որ ահա պիտի շրջինք Լիզոյի մօտ եւ դուրս գանք բաց ծովը։

Եւ մինչ մօտիս երգը մանկական անկեղծ ձայնով թոթովում է իր երգը՝ միտքս արագօրէն մի մենախօսութիւն է ասում։

Ասում է.—

Էլիսնօրան՝ հրաշալի այդ օտարուհին՝ կեանքիս գեղեցիկ արկածներից մէկն է. նրա մարմինը փղոսկր է. նրա կրծքի բամբ եւ թաւշեայ շեչտերի մէջ դարաւոր ու նուրբ քաղաքակրթութիւնը ափիոն է դնում եւ նրա ամէն մի ժեստը սարսուռ է։

Նա կանչ է դէպի անյայտը։

Էլիսնօրան, պատմական պալատի մեծդի իր սենեակում, ուր Տիեպոլոն մերկ մարմիններ է նկարել, Գուարդին տեսարաններ եւ Արեւելքը իր մետաքսներն է զետեղել, նմանում է ջերմանոցի փարթամ եւ գերազգայուն այն ծաղիկներին, որոնք հարբեցնում են օդը, երկարում ճեւերը եւ երակներին քաղցր թոյն տալիս։

— Եւ պատահում է այնպէս, որ հոգիդ, ահա, բոցավառ այդ առագաստի նման յանկարծ թռչում է։ Ուզում է գնալ, տենչում է դէպի ծով եւ թէպէտ գիտես որ քեզ սպասում են անակնկալներ, բայց չես վախում... Այնպէս չէ՞՝ չե՛ս վախում։

Ինձ սիրելի են հայերէն այդ խօսքերը։ Աղօթքը եւ սէրը ճչմարիտ են միայն մայրենի լեզուով։

Իսկ այնտեղ —

Էլիսնօրան մի բաժակ շատ հին գինու նման է։ Նրա համը բարդ է եւ կրակոտ։ Նրա գգացողութիւնը կազմւում է նուրբ թելերից. նրա գեղեցկութիւնը անդունդի նման է. նրա սէրը կլանող է։ Էլիսնօրան վտանգ է։

Ու մտքիս մէջ այդ բառը մրճահարում է. վտանգ է, վտա՛նգ է...

— Այստեղ խոնաւ է, չմրսես։ Ձեռքերդ մի քիչ պաղ են. տուր տաքացնեմ։ Ահա այդպէս, այդպէս ... Վենետիկի օդը դաւաճան է. պէտք է ուշադրութիւն անես. եթէ հիւանդանաս, ո՞վ քեզ պիտի խնամի ...

Էլիսնօրան ջրանցքների մօտ կերտուած հոյակապ արուեստ է։ Նա նմանում է ոսկեզօծուած արձաններին, որոնց վրայ գիշերները ժժգոյն լուսին է նստում եւ սարսռող մութ։ Նա քաշում է քեզ դիւթիչ երգի նման, պլլում բուրումների մէջ, կլանում եռդ եւ գինովցած քայլերդ տանում անկարելի մի աշխարհ։

Գլուխս դնում եմ երիտասարդ աղջկայ կրծքի վրայ. փակում եմ աչքերս եւ մի վայրկեան դառնում մանուկ։

Իսկ աչունը իր գեղեցիկ մելամաղձոտութեան օրօրն է ասում։ Տերեւները մէկիկ մէկիկ պոկւում են, մի վայրկեան մտածում ու վայր ընկնում մշանջենական լռութեան մէջ։

— Սխուր ես, սիրելիս, տխուր ես,— ասում է աղջիկը եւ շոյում մազերս։

— Մինակ ես, սիրելիս, մինակ ես,— ասում է աղջիկը եւ ձեռքը դնում այրուող ճակատիս վրայ։

— Ես քեզ սիրում եմ։

— Սիրո՞ւմ ես...

— Սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ...

* * *

Աշնան վերջը Լիզոն փակում է իր տունների փեղկերը։ Փողոցները ամայի են եւ Ադրիական մռնչում է մինակ։

Ծովափի ծառերի վրայ քամին մի վայրկեան դեռ կանգ է առնում հազուագիւտ տերեւների պատճառով։

Ստաբիլիմենտոյի վրայ խաչաձեւուած փայտեր են դամել։ Ճաղերը լռել են. ոչ ոք վերջացել է եւ գետինը խոնաւ է։

Դէպի Մ'ուլամօկկո երկարող ծառուղիները՝ մի քիչ վեր բարձրացած ամեռային երկրների տակ՝ մտահոգ սպասումի մէջ են. ոտին զարնուող ծովը խախտել է արմատները եւ աւազի մէջ հոսանքներ են գոյացել։

Այնինչ դժբախտ են պատերին կպած յայտարարութիւնները՝ մինակ եւ աւելորդ։

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան